«Օրերու լուսանցքին վրայ» *բանաստեղծութիւններու անտիպ հատորին մաս կազմող այս երկու քերթուածները հեղինակը նուիրած էր իր* Սիրելի Ուսուցիչին՝ լուսահոգի Հ. Եղիա Վրդ. Փէչիկեանի, *որ մահուան անկողնին մէջ՝ իր կեանքի վերջին օրերը կ'ապրէր:*

1964, Յունուար 22

## ԿԱՐՕՏ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Անշո՛ւշտ պիտի գամ ճանչնալ օր մը քեզ,
Տեսնել հողըդ գորշ, զայն շոյել երկար,
Ոտներըս հրպել տուֆեայ քարէ քար, —
Տուֆեայ քարէ քար վարդագոյն պարտէզ:

Մոռցած Երեւան, Գեղարդ ու Գառնի,
Պիտ' երթամ գտնել գիւղակնե՛րըդ ես,
Զի ճիշտ է սիրել նախ մանկիկն, որ կէս
Կեանքին համար իր լոկ մեր սէրն ունի:

Օտար հողէ հող շրջելէ յոգնած,
Ըսպառա՛ծ բախտին խաբկանքները սին,
Բիչ մ'ալ գամ հանգչիլ Արաքսի ափին,
Դիտելով Մասիսն ու լեռն Արագած:

Անշո՛ւշտ պիտի գամ ճանչնալ օր մը քեզ,
Տեսնել հողըդ գորշ, զայն շոյել երկար,
Ոտներըս հրպել տուֆեայ քարէ քար, —
Տուֆեայ քարէ քար վարդագոյն պարտէզ:

## ԳԱՅԼ ԳԵՏ

Գիտե՞ս գայլի պէս ոռնալ դուն, Գայլ գետ,
Երբ նետուելով դուրս լեռնէն Գոհանամ,
Զերդ նըժոյգ անթամբ, փալփլուն եւ աշխէտ,
Եփրատին կ'երթաս ծոցն հանգչիլ փարթամ:

Երէ գայլի պէս գայլ մ'ես գայլախազ,
Ի՜նչ հանոյք ինծի կռուիլ յորձքիդ դէմ,
Ապա փաթթըւիլ վըզիդ թաւամազ,
Ու ըսել քեզի՝ թէ քեզ կը սիրեմ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

# ՅԻՇԱՏԱԿ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ

Միլանոյ. – *Հակառակ աննպաստ եղանակին, Միլանոյի եւ մօտակայ վայրերու հայութիւնը խուռներամ ժամադրուած էր Հայկական Տան երդիքին տակ, ուր Իտալահայ Մշակութային Միութիւնը կը տօնախմբէր Սայեաթ-Նովայի ծննդեան 250ամեակը (Փետր. 27):*

*Ազգային Տան կեդրոնական պատին վրայ, գոյգ Մասիսներուն յարակից զետեղուած էր աշուղ-բանաստեղծին գունատիպ մեծադիր կենդանագիրը, ու ծաղկակալի մը մէջ՝ կարմիր վարդերու փունջ մը:*

*Օրուան բանախօսն էր Արամայիս Սրապեան, որ նախ խօսեցաւ իտալերէն, ապա հայերէն մանրամասն ծանրացաւ մեծ տաղասացին քերթողական արուեստին առանձնայատկութեանց վրայ, վեր հանելով անոր մէջ շրջող անկեղծութեան, անմիջականութեան վարակիչ շեշտը, լեցուած՝ յարաժամ ծայրէն սկսող հմայքով մը, որ կու գայ բառերու, ասութեանց եւ պատկերներու ներդաշնակօրէն իրարու ընդելուզուած ճարտարարութենէն:*

*Սիրերգակ գուսանին մէջ, ուր քնարերգութիւնը կը հասնի իսկապէս պայծառ բարձունքներու՝ կը գտնենք իմաստունը, խորհրդատուն, ժողովուրդին օգնական եւ ծառայող Սայեաթ-Նովան:*

*Իր բանաստեղծութիւններուն մէջ, ըսաւ, կը բաբախէ համամարդկային տաք շունչ մը, որ յայտարարն է ճշմարիտ արուեստին եւ խորապէս ապրուած զգացողութեան:*

*Մանրամասն տուաւ յօբելեար բանաստեղծին կենսագրական գծերը, ջանալով որոշը զատորոշել անորոշէն: Ապա յիշեց թէ ինչպէս, արեւելահայ մեր քերթողները, որոնք քիչ մը աշուղ են միշտ, իրենց ստեղծագործութեան որոշ շրջանին, հետեւեցան Սայեաթ-Նովայի, յօրինելով գիրենք նախորդող վարպետին արուեստն ու ոճը յիշեցնող երգեր, ու յիշեց՝ ժամանակագրական կարգով, Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան եւ Եղիշէ Չարենց մեծ երրորդութիւնը:*

*Յաջորդաբար Սայեաթ-Նովայէն արտասանեցին Խաչիկ Փիլիկեան (Արի համով գուլուղ արա – Աշխարումըս ախ չիմ քաշի – Դուն էն գըլխէն իմաստուն իս) եւ Նուպար Պօղապալեան (Ամէն սագի մէջըն զուլամ – Ուստի՞ կու գաս, զարիր բըլբուլ – Մի խօսք ունեմ իլթիմազով):*

*Արտասանողներուն կ'ընկերանար Հայաստանի Ժողովրդական Գործիքներու Միասնութեան երգային ձայնագրուած երաժշտական կտորներ:*

*Մեծ Գուսանէն իտալերէն արտասանեց Զուէն Մընաքեան (Խնդրանք մը ունիմ – Աչքերս միշտ թաց են – Համակերպէ ճակատագրին): Կիթառով կ'ընկերանար Յարութիւն Մանուկեան:*

*Ապա հանդէս եկաւ Սոնա Մինասեան, որ Սայեաթ-Նովայէն երգեց՝ հետեւեալ կտորները. — Մեջլումի պէս կորաւ եարըս – Մի խօսք ունեմ իլթիմազով – Չիս ասում թէ լաց իս էլի:*

*Դաշնակով կ'ընկերանար ուսուցչապետուհի Ֆրիկոյ:*

*Զգօն Եպիսկոպոս Տէր-Յակոբեան, իր փակման խօսքով Սայեաթ-Նովայի մէջ ողջունեց հայաշունչ գուսանն ու հաւատքի մարդը:*

*Ներկաները ջերմ ծափերով ողջունեցին Իտալահայ Մշակութային Միութեան այս իսկապէս մեծ խնամքով կազմակերպած հանդիսութիւնը, որ կ'ոգեկոչէր մեր բազմադարեան գրականութեան մեծագոյն Ձայներէն, Սայեաթ-Նովայի յիշատակը:*

* * *

*Վերոյիշեալ հանդիսութենէն ժամանակ մը յետոյ, 5 Մայիս 1964ի երեկոյեան, Իտալիոյ Հայ Մշակութային Միութիւնը երկրորդ հանդէս մը եւս կազմակերպեց մեծ աշուղին անմահ յիշատակին, որու ընթացքին Խաչիկ Փիլիկեան արտասանեց Յովհ. Թումանեանի, Եղիշէ Չարենցի, Սիլվա Կապուտիկեանի, Յովհ. Շիրազի, Արամայիս Սրապեանի եւ Սողոմոն Տարօնցիի քերթուածները՝ նուիրուած Սայեաթ-Նովայի: Ապա արտասանեց Սայեաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ», «Խաղ»ը: Իր արտասանութիւնները վերջացուց ներկայացնելով քառեակներ Գէորգի Լէոնիձէէ, Վալերի Բրիւսովէ, Եոսիֆ Գրիշաշվիլիէ եւ Սիմոն Չիքովանիէ:*

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ